ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-20-10/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 09.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն.Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նիիէլեկտրամաշ» ԳԱՋ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Պիվազյանի, ով գործում է «Նիիէլեկտրամաշ» ԳԱՋ ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 06.12.2019թ. կնքված N ԳՀԾՁԲ-20-10/2-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են 26.12.2019թ. ՀՀ կառավարության N 1919-Ն որոշմամբ և ՀՀ պաշտպանության նախարարի 12.02.2020թ. Ծանուցում N 2-ՊՆ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **փոխակերպիչների, էլեկտրական շարժիչների և պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայությունների** գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան **փոխակերպիչների, էլեկտրական շարժիչների և պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ** (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է **25 000 000 (քսանհինգ միլիոն)** ՀՀ դրամ, ընդ որում

1-ին չափաբաժնի մասով՝ **10 000 000** ՀՀ դրամ.

2-րդ չափաբաժնի մասով՝ **10 000 000** ՀՀ դրամ.

3-րդ չափաբաժնի մասով՝ **5 000 000** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՋ ՓԲԸ
ք. Երևան, Բագրամյան 5	Երևան, Գյուրջյան 15/14
ՀՀ ՖՆ գործառնական գանձարան	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Խորհրդային 1 մ/ճ
հ/հ 90001114409	հ/հ 163338100007
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00803719
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն.ՅՈԼՉՅԱՆ	Ա.ՊԻՎԱԶՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/2-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին 1. Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություն

Հ/հ	Ծառայության անվանումը և տեխնիկական բնութագիրը	Չափի միավոր	Միավորի նախահաշվային պլանավորված գինը (դրամ)										
			Վերանորոգվող ուժային տրանսֆորմատորների (փոխակերպիչների) տեսակները (հզորությունը ԿՎԱ)										
	փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV կոդ 50531220/505		25/ 10, 25/6	40/ 10, 40/6	63/ 10, 63/6	100/ 10, 100/6	160/ 10, 160/6	180/ 10, 180/6	250/ 10, 250/6	320/ 10, 320/6	400/ 10, 400/6	630/ 10, 630/6	1000/ 10, 1000/6
1	Տրանսֆորմատորի բարձր լարման մեկ փաթույթի փոխարինում	հատ	70,200	72,800	90,200	96,400	98,500	111,400	144,200	155,800	188,800	233,300	242,200
2	Տրանսֆորմատորի ցածր լարման մեկ փաթույթի փոխարինում		52,800	56,700	72,700	84,600	87,700	94,800	123,500	141,800	148,900	151,500	198,600
3	Տրանսֆորմատորի քանդում, հիմնական մեկուսացման պատրաստում, մագնիսական հաղորդիչի ամրացում, չորացում, հավաքում և կարգավորում		47,800	52,600	62,700	69,900	71,100	72,200	83,300	85,500	91,300	99,900	101,100
4	Յուղի արտահոսքի դադարեցում, տրանսֆորմատորի իրանի մաքրում և ներկում		13,700	14,100	20,100	21,500	22,200	23,600	24,800	25,500	33,800	37,700	39,900
Ընդամենը			**3,831,700.0**										

Ծառայության անվանումը	Հ/հ	Տեխնիկական բնութագիր	Մատուցման ժամկետը
Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	1	Տրանսֆորմատորի բարձր լարման մեկ փաթույթի փոխարինում	Ծառայության գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտերի հիման վրա՝ մինչև 15.12.2020թ.:
	2	Տրանսֆորմատորի ցածր լարման մեկ փաթույթի փոխարինում	
	3	Տրանսֆորմատորի քանդում, հիմնական մեկուսացման պատրաստում, մագնիսական հաղորդիչի ամրացում, հավաքում և կարգաբերում	
	4	Յուղի արտահոսքի դադարեցում, տրանսֆորմատորի իրանի մաքրում և ներկում	

1. Գնման պլանավորված նախահաշվային առավելագույն գինը կազմում է **10 000 000 (տասը միլիոն)** ՀՀ դրամ:
2. Տրանսֆորմատորների տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին:

Չափաբաժին 2. Էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություն

Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավորի պլանավորված նախահաշվային գինը (դրամ)																
			Վերանորոգվող շարժիչների հզորությունը																
			1.1 կվտ 1500-3000 պտ/րոպ	1.5 կվտ 1500-3000 պտ/րոպ	2.2 կվտ 1500-3000 պտ/րոպ	3.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	4.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	5.5 կվտ 1500-3000 պտ/րոպ	7.5 կվտ 1500-3000 պտ/րոպ	11.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	15.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	18.5 կվտ 1500-3000 պտ/րոպ	22.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	30.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	37.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	45.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	55.0 կվտ 1500-3000 պտ/րոպ	75.0 կվտ 1500-3000 պտ/րոպ
էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV կոդ՝ 50531210/503	Էլ.շարժիչի քանդում, վնասված փաթույթի հեռացում, նոր փաթույթի փաթաթում համապատասխան կտրվածքի հաղորդալարերով, լաքապատում, չորացում, առանցքակալների փոխարինումը նորով, կարգաբերում և ներկում:	հատ	22.200	33.000	39.840	52.560	75.120	82.620	103.200	144.600	180.000	210.000	218.400	270.000	324.000	364.800	391.200	444.000
Ընդամենը			2,955,540.0																

1. Գնման պլանավորված նախահաշվային առավելագույն գինը կազմում է **10 000 000 (տասը միլիոն)** ՀՀ դրամ:
2. Շարժիչների տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին:
3. **Ծառայության գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտերի հիման վրա՝ մինչև 15.12.2020թ.:**

Չափաբաժին 3. Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություն

CPV	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միավոր	Միավորի նախահաշվային պլանավորված գինը (դրամ)												Մատուցման ժամկետը
				Վերանորոգվող պոմպերի մակնիշները												
				1.5Կ6	2Կ6	2Կ9	3Կ9	4Կ6	4Կ8	4ԿՄ8	4Կ12	4Կ18	6Կ8	6Կ12	8Կ12	
50511100/505	Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	Պոմպերի քանդում: Առանցքակալների, լիսեռի, բանվորական անիվի փոխարինումը նորով: Յուղում, հավաքում, կարգաբերում և ներկում:	հատ	45,360	49,200	54,720	84,240	87,360	89,160	79,560	93,360	94,920	96,000	96,240	96,120	Ծառայության գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտերի հիման վրա՝ մինչև 15.12.2020թ.:
Ընդամենը				966,240.0												

1. Գնման պլանավորված նախահաշվային առավելագույն գինը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ:
2. Պոմպերի տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

[illegible] պաշտպանության նախարարության
[illegible] դեպարտամենտի պետ

Ն.ՅՈՒԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
Տնօրեն

Ա.ՊԻՎԱԶՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-10/2-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայությունների												
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20-ը
1	50531220/505	փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	2 500 000	5 000 000	5 000 000	5 000 000	7 500 000	7 500 000	7 500 000	10 000 000	10 000 000	10 000 000
2	50531210/503	էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	2 500 000	5 000 000	5 000 000	5 000 000	7 500 000	7 500 000	7 500 000	10 000 000	10 000 000	10 000 000
3	50511100/505	Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	1 250 000	2 500 000	2 500 000	2 500 000	3 750 000	3 750 000	3 750 000	5 000 000	5 000 000	5 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Պաշտպանության նախարարություն
Մատակարարման դեպարտամենտի պետ

Ն.ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Նիիէլեկտրամաշ» ԳԱՋ ՓԲԸ
Տնօրեն

Ա.ՊԻՎԱՋՅԱՆ